

Հատուկ կարծիք

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի վարչական պալատի կողմից
թիվ ՎԴ/10369/05/19 վարչական գործով 01.04.2024 թվականին կայացված որոշման
եզրափակիչ մասի վերաբերյալ

01.04.2024 թվական

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի վարչական պալատը (այսուհետ՝
Վճռաբեկ դատարան), 2024 թվականի ապրիլի 01-ին գրավոր ընթացակարգով քննելով ՀՀ
պաշտպանության նախարարության վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի
01.07.2022 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Գրիգոր Սերոբյանի ընդդեմ
Նախարարության, երրորդ անձ՝ ՀՀ ֆինանսների նախարարություն՝ աշխատած, սակայն
վարձատրություն չստացած շաբաթ օրերի և ծառայության ընթացքում չօգտագործված
ամենամյա արձակուրդների օրերի համար նախատեսված գումարները՝ 1999 թվականից
մինչև 23.02.2017 թվականը, վճարելուն պարտավորեցնելու պահանջների մասին, Վճռաբեկ
դատարանի դատավորների ընդհանուր թվի մեծամասնությամբ որոշել է վճռաբեկ վճռաբեկ
բողոքը մերժել և ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 01.07.2022 թվականի որոշումը
թողնել անփոփոխ՝ նույն որոշման պատճառաբանություններով:

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի դատավոր Հ. Բեդկյանս
համաձայն չլինելով վերը նշված որոշման եզրափակիչ մասի վերաբերյալ Վճռաբեկ
դատարանի դատավորների մեծամասնության կարծիքի հետ, ղեկավարվելով ՀՀ վարչական
դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով, շարադրում եմ իմ
հատուկ կարծիքը այդ մասի վերաբերյալ:

1. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Այս հատուկ կարծիքը շարադրելիս հիմք են ընդունվել որոշման մեջ ներկայացված՝
վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումներն ու վճռաբեկ բողոքի քննության համար
նշանակություն ունեցող փաստերը:

2. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Սույն գործը հարուցվել է Գրիգոր Սերոբյանի կողմից ներկայացված գործողության
կատարման հայցի հիման վրա, որով վերջինս պահանջել է պարտավորեցնել
Նախարարությանը կատարել որոշակի գործողություններ, այն է՝ վճարել իր աշխատած,
սակայն վարձատրություն չստացած շաբաթ օրերի և ծառայության ընթացքում
չօգտագործված ամենամյա արձակուրդների օրերի համար նախատեսված գումարները՝ 1999
թվականից մինչև 23.02.2017 թվականը:

ՀՀ վարչական դատարանը մասնակի բավարարել է Գրիգոր Սերոբյանի հայցը՝
պատճառաբանելով, որ Կանոնագրքով սահմանված են սպաներին, ենթասպաներին,
պայմանագրային զինծառայողներին, ինչպես նաև կին զինծառայողներին շաբաթական
ծառայության սահմանված ժամանակի տևողությունից դուրս ծառայողական
պարտականությունների կատարմանը ներգրավելու իրավական հնարավորություն ու այն
շաբաթվա մյուս օրերին հանգստով փոխհատուցելու, դրա անհնարինության դեպքում այդ
ժամանակը գումարելու և զինծառայողին հանգստի լրացուցիչ օրերի (կարող են միացվել
հիմնական արձակուրդներին) ձևով տալու իրավակարգավորումներ, սակայն որևէ կերպ չի
կարգավորել այն հարցը, թե հանգստի լրացուցիչ ժամանակ չտրամադրելու դեպքում ինչ
ձևով է նշված զինծառայողներին փոխհատուցվելու շաբաթական ծառայության ժամանակի

սահմանված տևողությունից դուրս ծառայողական պարտականությունների կատարմանը ներգրավված լինելու համար:

Հետևաբար Դատարանի գնահատմամբ վերը նշված իրավահարաբերությունը պետք է կարգավորվի ՀՀ աշխատանքային օրենսգրքի նորմերով՝ հիմք ընդունելով նույն օրենսգրքի 7-րդ հոդվածի 7-րդ մասը և ՀՀ վճարել դատարանի թիվ ԵԿԴ/3246/02/13 քաղաքացիական գործով 28.11.2014 թվականին կայացված որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումը:

Սույն գործում եղած ապացույցների համակցությամբ Դատարանն առավել հավանական է համարել ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական համալսարանի պետի 30.06.2020 թվականի թիվ 522 գրությամբ հայտնված տեղեկություններն այն մասին, որ Գրիգոր Սերոբյանը 01.01.2009 թվականից մինչև 03.03.2017 թվականը փաստացի 357՝ կես աշխատանքային շաբաթ օրերին ներկայացել է ծառայության:

Հայցվորը սույն գործով պահանջել է նաև 1999-2009 թվականներին վերաբերող շաբաթ օրերի և, նաև, 1999-2017 թվականների ընթացքում շաբաթ օրերի ժամը 14:00-18:00-ի համար վճարում, սակայն Դատարանը նշված մասով հայցը հիմնավոր չի համարել, քանի որ այդ ժամանակաշրջանին վերաբերող մասով ընդհանրապես առկա չէ որևէ ապացույց, իսկ զուտ միայն հայցվորի բանավոր դիրքորոշումը չի կարող իրավաչափ հիմք լինել նման ժամանակաշրջանի մասով նույնպես հայցը բավարարելու համար, ուստի ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի կանոնակարգմամբ նշյալ ժամանակաշրջանին վերաբերող մասով ապացուցման բացասական հետևանքներն ըստ էության դրվում են հայցվորի վրա:

Դատարանը գտել է, որ սույն գործի փաստերով հաստատվում է, որ Գրիգոր Սերոբյանը 2009-2017 թվականների ընթացքում 357 շաբաթ օրերին ներգրավված է եղել ծառայության ժամը 09:00-ից մինչև ժամը 14:00-ն, մինչդեռ Կանոնագրքի 227-րդ հոդվածի 2-րդ պարբերության ուժով ծառայողական շաբաթվա տևողությունը կազմում է 5 օր՝ երկօրյա հանգստով, ուստի հաշվի առնելով, որ ծառայության ներգրավված լինելու ժամերի համար հանգստի տրամադրում այլևս հնարավոր չէ (ազատվել է ծառայությունից), ստացվում է, որ 2009-2017 թվականներն ընկած ժամանակահատվածում 357 շաբաթ օրերի ժամը 09:00-ից մինչև ժամը 14:00-ի համար հայցվորն իրավունք ունի ստանալ օրենքով սահմանված փոխհատուցում:

Դատարանն արձանագրել է, որ հայցվորն ունի ամենամյա չօգտագործված 27 օր արձակուրդ, որի համար հատուցում կատարված չէ, քանի որ հակառակը հիմնավորող որևէ ապացույց պատասխանողի կողմից չի ներկայացվել, ուստի հայցվորն օրենքի ուժով իրավունք ունի ստանալու չօգտագործված արձակուրդի օրերի համար հատուցում, իսկ ինչ վերաբերում է 1999-2009 թվականների չօգտագործված արձակուրդներին, ապա Դատարանը նշված մասով նույնպես հայցը հիմնավոր չի համարել, քանի որ այդ ժամանակաշրջանին վերաբերող մասով ընդհանրապես առկա չէ որևէ ապացույց, իսկ զուտ միայն հայցվորի բանավոր դիրքորոշումը չի կարող իրավաչափ հիմք լինել նման ժամանակաշրջանի մասով հայցը բավարարելու համար, ուստի ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի կանոնակարգմամբ 1999-2009 թվականներին վերաբերող մասով ապացուցման բացասական հետևանքները ևս դրվում են հայցվորի վրա:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 01.07.2022 թվականի որոշմամբ Նախարարության վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի վճիռը թողնվել է անփոփոխ հետևյալ պատճառաբանությամբ. «...*օրենսդիրը Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին*» ՀՀ օրենքում սահմանելով

սպաներին, ենթասպաներին, պայմանագրով ծառայության անցած զինծառայողներին և կին զինծառայողներին շաբաթական ծառայության ժամանակի սահմանված տևողությունից դուրս ծառայողական պարտականությունների կատարմանը ներգրավելու հնարավորություն և սահմանելով այն շաբաթվա մյուս օրերին հանգստով փոխհատուցելու, դրա անհնարինության դեպքում՝ այդ ժամանակը գումարվելու և զինծառայողին հանգստի լրացուցիչ օրերի (կարող են միացվել հիմնական արձակուրդներին) ձևով տրվելու իրավակարգավորումներ, միաժամանակ չի կարգավորել այն հարցը, թե հանգստի լրացուցիչ ժամանակ չտրամադրվելու դեպքում ինչպես է փոխհատուցվում նշված զինծառայողներին շաբաթական ծառայության ժամանակի սահմանված տևողությունից դուրս ծառայողական պարտականությունների կատարմանը ներգրավված լինելու ժամանակը: Այսինքն, քննարկվող իրավանորմի կարգավորման առարկան այլ է, քան հանգստյան օրերին կատարված աշխատանքի դիմաց վարձատրության հետ կապված հարաբերությունների կանոնակարգումը. նշված նորմը սահմանում է ոչ թե հանգստյան օրերին վարձատրության կարգ, այլ սահմանում է հանգստյան օրերին կատարված աշխատանքը այլ օրերով փոխհատուցելու կարգ: Նշված նորմի կարգավորումը չի բացառում շաբաթ օրերի աշխատանքի դիմաց վարձատրություն ստանալու հնարավորությունը: Բացի այդ, նշված նորմերի համաձայն՝ շաբաթվա մյուս օրերին հանգիստ տրվում է զորամասի (ստորաբաժանման) հրամանատարի որոշմամբ, իսկ դրա անհնարինության դեպքում՝ հանգստյան օրերին կատարված աշխատանքի ժամանակը կարող է միացվել հիմնական արձակուրդին: Այսինքն՝ հանգստյան օրերին կատարված աշխատանքի ժամանակը փոխհատուցելու սահմանված կարգը նախ պահանջում է շաբաթվա մյուս օրերին հանգստով փոխհատուցելու անհնարինություն, երկրորդ՝ շաբաթվա մյուս օրերին հանգստով փոխհատուցումը կատարվում է զորամասի հրամանատարի որոշմամբ:

(...)

...ինչպես միջազգային իրավական փաստաթղթերով, այնպես էլ ներպետական օրենսդրությամբ, այդ թվում՝ «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքով երաշխավորվում է արդարացի վարձատրության իրավունքը, որը ներառում է նաև փաստացի կատարված աշխատանքի, այդ թվում՝ հանգստյան օրերին կատարված աշխատանքի դիմաց վարձատրության իրավունքը:

Վերոհիշյալի հիման վրա Վերաքննիչ դատարանը եզրահանգում է, որ շաբաթ օրերին աշխատանքի դիմաց ՀՀ պաշտպանության մարմիններում զինվորական ծառայության պաշտոն զբաղեցնողների /բացառությամբ պարտադիր զինվորական ծառայության զորակոչված շարքային կազմի և ռազմատուսումնական հաստատություններում սովորող կուրսանտների/ հանգստյան օրերը ենթակա են վարձատրման աշխատանքային օրվա վարձատրությանը համարժեք վարձատրությամբ:

(...)

Վերաքննիչ դատարանը, հիմնավոր է գնահատում Դատարանի եզրահանգումն առ այն, որ չօգտագործված արձակուրդի օրերի դիմաց փոխհատուցում ստանալու հնարավորությունը և իրավունքը չի կարող ունենալ որևէ ժամկետային սահմանափակում, ինչից հետևում է, որ հատուցման է ենթակա ծառայության ընթացքում չօգտագործված ամբողջ արձակուրդը»:

Վճռաբեկ դատարանը որոշել է ՀՀ պաշտպանության նախարարության վճռաբեկ բողոքը մերժել և ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 01.07.2022 թվականի որոշումը թողնել անփոփոխ՝ նույն որոշման պատճառաբանություններով՝ արձանագրելով, որ իրավակիրառ պրակտիկան պետք է զարգանա այն ուղղությամբ, որ հանրային պաշտոններ և հանրային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց աշխատանքային

(ծառայողական) հարաբերությունների նկատմամբ վկայակոչված իրավանորմը կարող է կիրառելի լինել միայն այն պարագայում, երբ հանրային պաշտոններ և հանրային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց աշխատանքային (ծառայողական) հարաբերություններին առնչվող կոնկրետ հարցերը կարգավորված չեն տվյալ ծառայության առանձնահատկությունները կարգավորող հատուկ օրենքներով: Այլ կերպ ասած, եթե հանրային պաշտոններ և հանրային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց աշխատանքային (ծառայողական) հարաբերությունները կարգավորված չեն տվյալ ծառայության առանձնահատկությունները կարգավորող հատուկ օրենքներով, ապա այդ հարաբերությունների նկատմամբ պետք է կիրառվի ՀՀ աշխատանքային օրենսգրքի 7-րդ հոդվածի 7-րդ մասը:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ Գրիգոր Սերոբյանի կողմից ներկայացվել է գործողության կատարման հայց, որով վերջինս պահանջել է պարտավորեցնել Նախարարությանը կատարել որոշակի գործողություններ, այն է՝ վճարել իր աշխատած, սակայն վարձատրություն չստացած շաբաթ օրերի և ծառայության ընթացքում չօգտագործված ամենամյա արձակուրդների օրերի համար նախատեսված գումարները՝ 1999 թվականից մինչև 23.02.2017 թվականը: Այսինքն, հայցվորը, ըստ էության, պահանջել է հանգստյան օրերին կատարված աշխատանքի դիմաց վարձատրություն տրամադրելուն, ինչպես նաև ծառայության ընթացքում չօգտագործված ամենամյա արձակուրդների օրերի համար նախատեսված գումարները վճարելուն ուղղված գործողություններ կատարել:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ նշված իրավահարաբերությունը ենթակա է կարգավորման «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքով, որի համաձայն՝ զինծառայողներին հանգստյան, տոնական օրերին աշխատանքի համար հավելումներ չեն տրվում, բացառությամբ այն դեպքերի, երբ հավելումների վճարումը նախատեսված է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ: Սույն գործով բացակայում է որևէ ապացույց առ այն, որ հայցվորի կողմից իրականացված ծառայությունը նախատեսված է ՀՀ կառավարության 03.07.2014 թվականի «Զինված ուժերում, ազգային անվտանգության մարմիններում, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանությունում, քրեակատարողական և փրկարար ծառայություններում ծառայության առանձնահատկություններով պայմանավորված հավելումների տրամադրման դեպքերը, դրանց վճարման չափերը և կարգը սահմանելու մասին» թիվ 712-Ն որոշմամբ հաստատված՝ «Զինված ուժերում ծառայության առանձնահատկություններով պայմանավորված հավելումների տրամադրման դեպքերը և հաշվարկման գործակիցները» թիվ 1 հավելվածով:

Այդուհանդերձ՝ Վճռաբեկ դատարանը փաստել է, որ Գրիգոր Սերոբյանը շաբաթական ծառայության ժամանակի սահմանված տևողությունից դուրս ծառայողական պարտականությունների կատարմանը ներգրավված լինելու ժամանակը ենթակա է փոխհատուցման, քանի որ վերջինս ունի փաստացի աշխատանքի դիմաց համարժեք հատուցում ստանալու իրավունք: Այս համատեքստում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ Գրիգոր Սերոբյանի շաբաթական ծառայության ժամանակի սահմանված տևողությունից դուրս ծառայողական պարտականությունների կատարմանը ներգրավված լինելու ժամանակը շաբաթվա մյուս օրերին հանգստի տրամադրմամբ չի փոխարինվել, ինչպես նաև վերջինիս չեն տրամադրվել հանգստի լրացուցիչ օրեր, որպիսի պայմաններում այդ ժամանակը ենթակա էր գումարման հիմնական արձակուրդներին: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նման պայմաններում Գրիգոր Սերոբյանի շաբաթական ծառայության ժամանակի սահմանած տևողությունից դուրս ծառայողական

պարտականությունների կատարմանը ներգրավված լինելու ժամանակը անհրաժեշտ է դիտարկել որպես չօգտագործված արձակուրդ, որը ենթակա էր վճարման վերջնահաշվարկի շրջանակներում՝ ՀՀ զինված ուժերի պահեստագոր արձակվելիս:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Գրիգոր Սերոբյանը ՀՀ պաշտպանության նախարարի 23.02.2017 թվականի թիվ 372 հրամանի համաձայն՝ արձակվել է ՀՀ զինված ուժերի պահեստագոր: ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական համալսարանի պետի 31.10.2019 թվականի թիվ 1127 գրությամբ հայտնվել է հետևյալը. «... 2. փոխգնդապետ Գրիգոր Լյովայի Սերոբյան՝

1) 2009 թվականի հունվարի 1-ից սկսած մինչև ՀՀ ՊՆ 24236 զորամասի ցուցակներից հանվելը՝ 03.03.2017թ., հաշվարկվում է ընդհանուր առմամբ թվով 426 (չորս հարյուր քսանվեց) հատ շաբաթ օրեր:

2) Նշված շաբաթ օրերից այդ տարիների համար ոչ աշխատանքային, տոնական և սգո օրեր են եղել՝ 03.01.2009, 09.05.2009, 02.01.2010, 24.04.2010, 01.05.2010, 01.01.2011, 08.01.2011, 28.05.2011, 31.12.2011, 28.01.2012, 21.09.2013, 04.01.2014, 08.03.2014, 05.07.2014, 03.01.2015, 09.05.2015, 02.01.2016՝ թվով 17 շաբաթ օրեր:

3) Փոխգնդապետ Գրիգոր Լյովայի Սերոբյանին հատկացվել է հերթական, ինչպես նաև լրացուցիչ արձակուրդներ հետևյալ ժամկետներում՝

- 05.06.2009-06.06.2009՝ 1 օր լրացուցիչ, թվով 1 շաբաթ օր,
- 11.08.2009-09.09.2009՝ 30 օր, թվով 4 շաբաթ օրեր,
- 05.11.2009-07.11.2009՝ 3 օր լրացուցիչ, թվով 1 շաբաթ օր,
- 13.02.2010-27.02.2010՝ 15 օր, թվով 3 շաբաթ օրեր,
- 16.06.2010-30.06.2010՝ 15 օր, թվով 2 շաբաթ օրեր,
- 16.02.2011-02.03.2011՝ 15 օր, թվով 3 շաբաթ օրեր,
- 30.04.2011-07.05.2011՝ 8 օր լրացուցիչ, թվով 2 շաբաթ օրեր,
- 22.08.2011-05.09.2011՝ 15 օր, թվով 2 շաբաթ օրեր,
- 23.06.2012՝ 1 օր լրացուցիչ, թվով 1 շաբաթ օր,
- 01.08.2012-30.08.2012՝ 30 օր, թվով 4 շաբաթ օրեր,
- 22.02.2013-23.02.2013՝ 2 օր լրացուցիչ, թվով 1 շաբաթ օր,
- 25.07.2013-27.08.2013՝ 34 օր, թվով 4 շաբաթ օրեր,
- 23.05.2014-24.05.2014՝ 2 օր լրացուցիչ, թվով 1 շաբաթ օր,
- 21.07.2014-30.08.2014՝ 40 օր, թվով 7 շաբաթ օրեր,
- 16.01.2015-17.01.2015՝ 2 օր լրացուցիչ, թվով 1 շաբաթ օր,
- 06.07.2015-25.07.2015՝ 20 օր, թվով 3 շաբաթ օրեր,
- 01.09.2015-22.09.2015՝ 22 օր, թվով 3 շաբաթ օրեր,
- 01.08.2016-09.09.2016՝ 40 օր, թվով 6 շաբաթ օրեր,
- 24.02.2017-26.02.2017՝ 3 օր լրացուցիչ, թվով 1 շաբաթ օր:

4) Գտնվել է վերակարգում որպես զորամասի հերթապահ թվով 6 շաբաթ օր՝ 21.03.2009, 29.06.2013, 07.09.2013, 19.10.2013, 21.12.2013 և 10.12.2016 ...»:

6) ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական համալսարանի պետի 30.06.2020 թվականի թիվ 522 գրությամբ ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության պետին հայտնվել է հետևյալը.

(...)

Փոխգնդապետ Գրիգոր Լյովայի Սերոբյանի յուրաքանչյուր շաբաթ օրերին (լրացուցիչ տեղեկացնում եմ, որ շաբաթ օրերի տևողությունը եղել է ժամը 09:00-ից մինչև ժամը 14:00) ծառայության ներկայանալու փաստը զորամասում ամրագրված լինելու վերաբերյալ որևէ փաստաթուղթ չկա, քանի որ ներկայանալու փաստը հիմնավորող փաստաթուղթ կարող էին

հանդիսանալ միայն ուսումնական ծրագրով նախատեսված դասացուցակները, որտեղ գրառվում են պարապմունքն անցկացնող դասախոսի տվյալները, պարապմունքի օրը և թեման, սակայն դասացուցակների պահպանման ժամկետից ելնելով (ՀՀ ՊՆ 31.03.2010թ. հրաման N 058, հոդված 247, արխիվ չեն հանձնվում, ոչնչացվում են անհրաժեշտությունն անցնելուց հետո՝ գործավարության ավարտից 1 տարի անց)՝ դրանք ոչնչացվել են:

Ստացվում է, որ.

1) 2009 թվականի հունվարի 1-ից սկսած մինչև ՀՀ ՊՆ 24236 զորամասի ցուցակներից հանվելը՝ 03.03.2017թ., հաշվարկվում է ընդհանուր առմամբ թվով 426 (չորս հարյուր քսանվեց) հատ շաբաթ օր,

2) նշված շաբաթ օրերից այդ տարիների համար ոչ աշխատանքային, տոնական և սզո օրեր են եղել՝ 03.01.2009, 09.05.2009, 02.01.2010, 24.04.2010, 01.05.2010, 01.01.2011, 08.01.2011, 28.05.2011, 31.12.2011, 28.01.2012, 21.09.2013, 04.01.2014, 08.03.2014, 05.07.2014, 03.01.2015, 09.05.2015, 02.01.2016, 31.12.2016, 07.01.2017, 28.01.2017՝ թվով 20 շաբաթ օր,

3) փոխգնդապետ Գրիգոր Լյովայի Սերոբյանին հատկացվել են հերթական, ինչպես նաև լրացուցիչ արձակուրդներ հետևյալ ժամկետներում՝

- 05.06.2009-06.06.2009՝ 1 օր լրացուցիչ, թվով 1 շաբաթ օր,
 - 11.08.2009-09.09.2009՝ 30 օր, թվով 4 շաբաթ օր (2009թ. չօգտագործված արձակուրդը կազմել է 00 օր),

- 05.11.2009-07.11.2009՝ 3 օր լրացուցիչ, թվով 1 շաբաթ օր,
 - 12.02.2010-26.02.2010՝ 15 օր, թվով 3 շաբաթ օր,
 - 15.06.2010-29.06.2010՝ 15 օր, թվով 2 շաբաթ օր (2010թ. չօգտագործված արձակուրդը կազմել է 00 օր),

- 16.02.2011-02.03.2011՝ 15 օր, թվով 2 շաբաթ օր,
 - 30.04.2011-07.05.2011՝ 8 օր լրացուցիչ, թվով 2 շաբաթ օր,
 - 22.08.2011-05.09.2011՝ 15 օր, թվով 2 շաբաթ օր (2011թ. չօգտագործված արձակուրդը կազմել է 10 (տասը) օր),

- 23.06.2012՝ 1 օր լրացուցիչ, թվով 1 շաբաթ օր,
 - 01.08.2012-30.08.2012՝ 30 օր, թվով 4 շաբաթ օր (2012թ. չօգտագործված արձակուրդը կազմել է 10 (տասը) օր),

- 22.02.2013-23.02.2013՝ 2 օր լրացուցիչ, թվով 1 շաբաթ օր,
 - 25.07.2013-26.08.2013՝ 33 օր, թվով 5 շաբաթ օր (2013թ. չօգտագործված արձակուրդը կազմել է 7 (յոթ) օր),

- 23.05.2014-24.05.2014՝ 2 օր լրացուցիչ, թվով 1 շաբաթ օր,
 - 21.07.2014-30.08.2014՝ 40 օր, թվով 6 շաբաթ օր (2014թ. չօգտագործված արձակուրդը կազմել է 00 օր),

- 16.01.2015-17.01.2015՝ 2 օր լրացուցիչ, թվով 1 շաբաթ օր,
 - 06.07.2015-25.07.2015՝ 20 օր, թվով 3 շաբաթ օր,
 - 01.09.2015-22.09.2015՝ 22 օր, թվով 3 շաբաթ օր (2015թ. չօգտագործված արձակուրդը կազմել է 00 օր),

- 01.08.2016-12.09.2016՝ 43 օր, թվով 6 շաբաթ օր (2016թ. չօգտագործված արձակուրդը կազմել է 00 օր),

- 24.02.2017-26.02.2017՝ 3 օր լրացուցիչ, թվով 1 շաբաթ օր,
 4) ՀՀ ՊՆ 24236 զորամասի ցուցակներից հանվելիս 2017թ.-ի չօգտագործված արձակուրդի համար (2017թ. չօգտագործված արձակուրդը կազմել է 7 օր) ստացել է դրամական փոխհատուցում՝ 78552 ՀՀ դրամ:

Այսպիսով, փոխգնդապետ Գրիգոր Լյովայի Սերոբյանի համար 2009 թվականի հունվարի 1-ից մինչև ՀՀ ՊՆ 24236 զորամասի ցուցակներից հանվելու օրը՝ 03.03.2017թ.,

- Առանց արձակուրդում, գործուղման մեջ, հոսպիտալում բուժման մեջ գտնվելու ժամանակահատվածների և ոչ աշխատանքային, տոնական և սգո օրերի՝ փոխգնդապետ Գ. Սերոբյանի շաբաթ օրերին ծառայության ներկայանալու օրերի քանակը ենթադրաբար կարող էր կազմել 357 կես աշխատանքային օրից ոչ ավելի, ենթադրաբար՝ այն պարզ պատճառով, որ նշված օրերին նրա ծառայության ներկայանալու կամ չներկայանալու վերաբերյալ փաստական տվյալներ զորամասում չկան:

- 2009-2015թթ. ներառյալ չօգտագործած արձակուրդը կազմել է 27 (քսանյոթ) օր: Հարկ եմ համարում նշել, որ տվյալ ժամանակահատվածում գործող ՀՀ կառավարության 2000թ. նոյեմբերի 27-ի N 778 որոշման 15.1 կետի համաձայն՝ «Զինվորական ծառայությունից արձակվող և ոչ ավելի, քան 2 տարվա ընթացքում (ծառայությունից արձակվելու և դրան նախորդող տարում) հերթական արձակուրդից չօգտված (կամ մասամբ օգտված) զինծառայողներին տրվում է չօգտագործված արձակուրդի օրերի դիմաց փոխհատուցում»:

Հավելեմ նաև, որ համաձայն ՀՀ ԶՈւ ներքին ծառայության կանոնագրքի 5-րդ գլխի 227-րդ հոդվածի՝ ռազմաուսումնական հաստատություններում, ուսումնական կենտրոնների ունկնդիրների և կուրսանտների համար ծառայողական շաբաթվա տևողությունը սահմանվում է վեցօրյա աշխատանքային շաբաթ՝ մեկ հանգստյան օրով, իսկ փոխգնդապետ Գրիգոր Լյովայի Սերոբյանը հանդիսացել է դասախոսական կազմի զինծառայող, ուստի չի բացառվում վերջինիս ներգրավվածությունն ուսումնական գործընթացի կազմակերպմանը՝ շաբաթ օրերին, սակայն տվյալ դեպքում նույն հոդվածի համաձայն՝ հանգստյան և տոնական օրերին ծառայողական պարտականությունների կատարմանը ներգրավված զինծառայողներին շաբաթվա մյուս օրերին հրամանատարի որոշմամբ հանգստյան օր տրամադրված լինելը ևս չի բացառվում, որը կարող էր լինել նաև բանավոր կարգով: Նշված զինծառայողին շաբաթ օրերին ծառայության ներգրավելու դեպքում շաբաթվա մյուս օրերին հանգստյան օր տրամադրելու վերաբերյալ փաստական տվյալներ կամ հստակ տեղեկություններ զորամասում չեն պահպանվել ...»:

Այսպիսով Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ հայցվորը 01.01.2009 թվականից մինչև 03.03.2017 թվականն ընկած ժամանակահատվածի ծառայության ընթացքում 426 շաբաթ օրեր ներգրավել է ծառայողական պարտականությունների կատարմանը, իսկ ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական համալսարանի պետի 30.06.2020 թվականի թիվ 522 գրությամբ հիմնավորվում է, որ Գրիգոր Սերոբյանն ամբողջ ծառայության ընթացքում զինվորական ծառայությանը ներգրավված շաբաթ օրերի փոխարեն մյուս ծառայողական օրերին, ինչպես նաև լրացուցիչ օրերի ձևով հանգիստ չի տրամադրվել և հիմնական արձակուրդներին օրեր չեն ավելացվել:

Սույն գործի փաստական հանգամանքները համադրելով վերը նշված իրավակարգավորումների հետ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վերոգրյալ ժամանակահատվածի ծառայության ընթացքում Գրիգոր Սերոբյանն ընդգրկվել է ծառայության նաև շաբաթ օրերին և այդ ժամանակահատվածի ծառայության ընթացքում ոչ աշխատանքային շաբաթ օրերին ծառայության ներգրավելու փոխարեն Կանոնագրքով սահմանված որևէ եղանակով փոխհատուցում չի ստացել: Ուստի Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Գրիգոր Սերոբյանի շաբաթական ծառայության ժամանակի սահմանված տևողությունից դուրս ծառայողական պարտականությունների կատարմանը ներգրավված լինելու ժամանակը ենթակա է փոխհատուցման չօգտագործված արձակուրդի օրերի դիմաց դրամական փոխհատուցում տրամադրելու ձևով:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ տվյալ դեպքում ենթակա էր կիրառման ՀՀ կառավարության 09.08.2018 թվականին ընդունված և 18.08.2018 թվականի ուժի մեջ մտած «Հայաստանի Հանրապետության տարածքում արձակուրդի անցկացման վայր մեկնելիս և արձակուրդի անցկացման վայրից վերադառնալիս զինծառայողի տրանսպորտային ծախսերը փոխհատուցելու կարգը և պայմանները, զինվորական ծառայությունից արձակվելիս չօգտագործված արձակուրդի օրերի դիմաց զինծառայողին տրվող փոխհատուցման չափը սահմանելու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի նոյեմբերի 27-ի N 778 և 2004 թվականի մայիսի 6-ի N 886-ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 898 որոշումը:

Հետևաբար Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ չնայած այն հանգամանքին, որ Վերաքննիչ դատարանը կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ, այդուհանդերձ, Վերաքննիչ դատարանը չի հստակեցրել, թե որ իրավակարգավորումների համատեքստում է խնդրո առարկա իրավահարաբերությունը ենթակա կարգավորման:

3. Վճռաբեկ դատարանի դատավոր Հովսեփ Բեդկյանս, համաձայն չլինելով վճռաբեկ բողոքի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի վերը նշված որոշման եզրափակիչ մասի հետ, շարադրում են իմ հատուկ կարծիքը՝ որոշման եզրափակիչ մասի վերաբերյալ:

Այսպես՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ զինծառայողների շաբաթական ծառայության ժամանակի սահմանված տևողությունից դուրս հանգստյան օրերին ծառայողական պարտականությունների կատարմանը ներգրավված լինելու ժամանակը ըստ էության օրենսդիրը փոխհատուցել է այլ հանգստյան օրերի տրամադրման միջոցով՝ երաշխավորելով Սահմանադրությամբ, ինչպես նաև միջազգային իրավական փաստաթղթերով սահմանված՝ հանգստի իրավունքի ապահովումը: Հանգստյան և տոնական օրերին ծառայողական պարտականությունների կատարմանը սպաներին ու ենթասպաներին ներգրավելու դեպքում զորամասի (ստորաբաժանման) հրամանատարի որոշումով հանգիստ է տրվում շաբաթվա մյուս օրերին՝ ծառայության շահերի հաշվառումով, իսկ դրա անհնարինության դեպքում այդ ժամանակը գումարվում և զինծառայողին է տրվում հանգստի լրացուցիչ օրերի ձևով, որոնք կարող են միացվել հիմնական արձակուրդներին: Այսինքն՝ հանգստյան օրերին ծառայողական պարտականությունների կատարմանը ներգրավված լինելու ժամանակը զորամասի (ստորաբաժանման) հրամանատարի որոշումով շաբաթվա մյուս օրերին տրամադրելու անհնարինության և լրացուցիչ հանգստյան օրերը չօգտագործելու դեպքում այն միացվում է հիմնական արձակուրդներին:

Կարևորելով փաստացի կատարված աշխատանքի դիմաց վարձատրության պահանջի իրավունքի իրացումը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ շաբաթական ծառայության ժամանակի սահմանված տևողությունից դուրս ծառայողական պարտականությունների կատարմանը ներգրավված լինելու դեպքում անձն ունի այդ ժամանակի դիմաց փոխհատուցում ստանալու «օրինական սպասելիք», որը կարող է իրացվել չօգտագործված արձակուրդի օրերի դիմաց փոխհատուցման ձևով:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ ՍԴՈ-1424 որոշման ուժով «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 61-րդ հոդվածի 16-րդ մասը զինծառայողների համար երաշխավորում է չօգտագործված արձակուրդի դիմաց փոխհատուցում ստանալու իրավունքը՝ առանց որևէ ժամկետային սահմանափակման:

Համաձայն լինելով Վճռաբեկ դատարանի այն դիրքորոշման հետ, որ շաբաթական ծառայության ժամանակի սահմանված տևողությունից դուրս ծառայողական պարտականությունների կատարմանը ներգրավված լինելու դեպքում անձն ունի այդ

ժամանակի դիմաց փոխհատուցում ստանալու «օրինական սպասելիք», որը կարող է իրացվել չօգտագործված արձակուրդի օրերի դիմաց փոխհատուցման ձևով՝ հայտնում են իմ անհամաձայնությունը որոշման եզրափակիչ մասի դեմ՝ հետևյալ հիմնավորմամբ.

«Վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ սույն օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի դիմելու վարչական դատարան, եթե համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի վարչական ակտով, գործողությամբ կամ անգործությամբ՝ խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ (այսուհետ՝ Սահմանադրություն), միջազգային պայմանագրերով, օրենքներով կամ այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները, ներառյալ, եթե՝ խոչընդոտներ են հարուցվել այդ իրավունքների և ազատությունների իրականացման համար, չեն ապահովվել անհրաժեշտ պայմաններ այդ իրավունքների իրականացման համար, սակայն դրանք պետք է ապահովվեին Սահմանադրության, միջազգային պայմանագրի, օրենքի կամ այլ իրավական ակտի ուժով, նրա վրա ոչ իրավաչափորեն դրվել է որևէ պարտականություն, նա վարչական կարգով ոչ իրավաչափորեն ենթարկվել է վարչական պատասխանատվության:

«Վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործի փաստական հանգամանքները դատարանը պարզում է ի պաշտոնե ("ex officio"):

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատարանը մատնանշում է հայցադիմումներում առկա ձևական սխալները, առաջարկում է ճշտել ոչ հստակ հայցային պահանջները, ոչ ճիշտ հայցատեսակները փոխարինել պատշաճ հայցատեսակներով, տարբերակել հիմնական և ածանցյալ պահանջները, համալրել ոչ բավարար փաստական տվյալները, ինչպես նաև պահանջում է, որ ներկայացվեն գործի փաստական հանգամանքները պարզելու և գնահատելու համար անհրաժեշտ բոլոր ապացույցները:

«Վարչական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածի համաձայն՝ վարչական դատարանում գործը հարուցվում է հայցի հիման վրա:

«Վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ հայցադիմումը բովանդակում է հայցվորի պահանջը:

«Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներից մեկում փաստել է, որ «Վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետի ուժով հայցադիմումում պետք է նշվի հայցվորի պահանջը, որը կազմում է հայցի առարկան, և որի մերժման կամ բավարարման վերաբերյալ դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտ է կայացնում: «Վճռաբեկ դատարանը գտել է, որ պատասխանողին ուղղված նյութաիրավական պահանջը (հայցի առարկան) հայցադիմումում պետք է շարադրված լինի այն կերպ, որ դատարանի համար առնվազն պարզ լինի, թե ինչ է ակնկալում հայցվորը՝ դատական պաշտպանություն հայցելով: Այլ կերպ ասած՝ հայցադիմումը պետք է բովանդակի հայցի առարկան բավարար հստակությամբ, որպեսզի դատարանը հնարավորություն ունենա ներկայացված նյութաիրավական պահանջի կապակցությամբ իրավական որոշակիության սկզբունքի պահանջներին բավարարող դատական ակտ կայացնել:

Ասվածը հատկապես կարևոր նշանակություն ունի վարչական դատավարությունում, քանի որ օրենսդիրը, «Վարչական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածում ամրագրելով, որ վարչական դատարանում գործ հարուցելու հիմքը հայցն է, «Վարչական դատավարության օրենսգրքի մյուս հոդվածներում սահմանել է հանրային իրավահարաբերություններից ծագող գործերով իրավասու սուբյեկտների կողմից վարչական դատարան դիմելու հայցատեսակները՝ որպես վարչական գործի հարուցման հիմքեր:

Այսինքն՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը հստակ սահմանում է այն հայցատեսակները, որոնց միջոցով ֆիզիկական և իրավաբանական անձինք կարող են վարչական դատարանից հայցել իրենց խախտված իրավունքների և շահերի դատական պաշտպանություն: Ընդ որում, նշված հայցատեսակները միմյանցից առաջին հերթին տարբերվում են հայցի առարկայով, այսինքն՝ այն նյութափրավական պահանջի բովանդակությամբ, որը ֆիզիկական և իրավաբանական անձինք ուղղում են այս կամ այն վարչական մարմնին (*տե՛ս, Արթուր Ավթանդիյանը և մյուսներն ընդդեմ ՀՀ ոստիկանության թիվ ՎԴ/1707/05/15 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 24.03.2017 թվականի որոշումը, ինչպես նաև տե՛ս, Վարուժան Ավետիսյանն ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության թիվ ՎԴ/3804/05/15 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 14.03.2017 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանը մեկ այլ որոշմամբ ընդգծել է, որ գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու ("ex officio") սկզբունքի համաձայն՝ դատարանի ակտիվ դերակատարությունն արտահայտվում է, մասնավորապես, որոշակի դատավարական գործողություններ կատարելիս դատավարության մասնակիցներին օժանդակելու՝ վարչական դատարանի պարտականությամբ: Այսպես, գործնականում հնարավոր են դեպքեր, երբ ֆիզիկական և իրավաբանական անձինք՝ որպես վարչական դատավարության մասնակիցներ, ակնկալելով վարչական դատավարության կարգով վերականգնել իրենց խախտված իրավունքները, հայցադիմումը ներկայացնում են ձևական սխալներով, ճիշտ չեն ընտրում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված համապատասխան հայցատեսակը կամ ճիշտ չեն ձևակերպում իրենց հայցային պահանջները կամ ճիշտ չեն տարբերակում հիմնական ու ածանցյալ պահանջները կամ ներկայացնում են ոչ բավարար փաստական տվյալներ: Նշված դեպքերում վարչական դատարանի՝ դատավարության մասնակիցներին օժանդակելու պարտականությունը ստանում է գործնական մեծ նշանակություն, քանի որ հայցադիմումներում առկա ձևական սխալները մատնանշելու, ինչպես նաև ոչ հստակ հայցային պահանջները ճշտելու, ոչ ճիշտ հայցատեսակները պատշաճ հայցատեսակներով փոխարինելու, հիմնական և ածանցյալ պահանջները տարբերակելու, ոչ բավարար փաստական տվյալները համալրելու վերաբերյալ դատավարության մասնակիցներին առաջարկ անելու վարչական դատարանի պարտականության պատշաճ կատարման պայմաններում ապահովվում է ոչ միայն արդյունավետ դատաքննությունը, այլ նաև անձի խախտված իրավունքների արդյունավետ դատական պաշտպանությունը (*տե՛ս, Ալեքսանդր Կարալովն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԴ/4315/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.04.2016 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշմամբ անդրադառնալով հայցի հիմքերին և առարկային, արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները. հայցի առարկան այն նյութափրավական պահանջն է, որը հայցվորը ներկայացնում է պատասխանողի դեմ, և որի վերաբերյալ դատարանը որոշում է կայացնում: Ընդ որում, հայցի առարկայից պետք է տարբերել հայցի օբյեկտը, այսինքն՝ այն առարկան, որին ուղղված է հայցի առարկայի բովանդակությունը կազմող պահանջը: Հայցի փաստական հիմքն այն հանգամանքներն են, որոնց հետ նյութական իրավունքի նորմը կապում է իրավահարաբերությունների առաջացումը, փոփոխումը կամ դադարումը: Հայցի փաստական հիմքը, ըստ էության, իրավաբանական փաստերն են, հանգամանքները, որոնք հիմք են հանդիսացել հայցվորի պահանջի համար: Հայցի փաստական հիմքից բացի հայցի տարրերի մեջ ներառվում է նաև հայցի իրավական հիմքը, որն այն իրավական նորմերն են, որոնք կարգավորում են վիճելի իրավահարաբերությունը: Չնայած ՀՀ քաղաքացիական

դատավարության օրենսգիրքը հայցվորից չի պահանջում հայցադիմումում նշել այն իրավական նորմերը, որոնց վրա հիմնվում է հայցապահանջը, այնուամենայնիվ, հայցվորը բացի փաստական հանգամանքներից կարող է հայցադիմումում նշել այն իրավական նորմերը, որոնց հիման վրա կողմերի միջև ծագել են համապատասխան իրավահարաբերություններ, և որը վերջինիս հիմք է տալիս առկա փաստական հանգամանքների հետ միասին ներկայացնել համապատասխան պահանջ (*տե՛ս, Վիգեն Ուրուշանյանն ընդդեմ Սուրիկ Սեդրակյանի թիվ ԵՇԴ/0473/02/10 քաղաքացիական գործով* << վճռաբեկ դատարանի 27.05.2011 թվականի որոշումը): << վճռաբեկ դատարանը << կատավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Գորիսի տարածքային հարկային տեսչությունն ընդդեմ Ա/Ձ Արսեն Եսայանի թիվ ՎԴ1/0223/05/13 վարչական գործով 22.07.2016 թվականի որոշմամբ ընդգծել է, որ հայցի առարկայի և հիմքի վերաբերյալ վերը նշված դիրքորոշումը կիրառելի է թե՛ քաղաքացիական դատավարության և թե՛ վարչական դատավարության կանոններով ներկայացված հայցերի նկատմամբ:

Մեկ այլ որոշմամբ << վճռաբեկ դատարանը փաստել է, որ << վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետի ուժով հայցադիմումում պետք է նշվի հայցվորի պահանջը, որը կազմում է հայցի առարկան, և որի մերժման կամ բավարարման վերաբերյալ դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտ է կայացնում: << վարչական դատավարության օրենսգիրքը հստակ սահմանում է այն հայցատեսակները, որոնց միջոցով ֆիզիկական և իրավաբանական անձինք կարող են վարչական դատարանից հայցել իրենց խախտված իրավունքների և շահերի դատական պաշտպանություն: Ընդ որում, նշված հայցատեսակները միմյանցից առաջին հերթին տարբերվում են հայցի առարկայով, այսինքն՝ այն նյութաիրավական պահանջի բովանդակությամբ, որը ֆիզիկական և իրավաբանական անձինք ուղղում են այս կամ այն վարչական մարմնին:

<< վճռաբեկ դատարանը նախկինում կայացված որոշմամբ արձանագրել է, որ << Սահմանադրությամբ և Կոնվենցիայով երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի իրացման հիմնական սկզբունքներից է տնօրինչականության (դիսպոզիտիվության) սկզբունքը, որն անձի՝ << Սահմանադրությամբ և օրենքով նրան տրված հնարավորությունն է սեփական հայեցողությամբ տնօրինելու իր նյութական և դատավարական իրավունքները և դրանց պաշտպանության եղանակները: Տնօրինչականության (դիսպոզիտիվության) սկզբունքն անձանց հնարավորություն է տալիս ինքնուրույն որոշել՝ դիմել, թե չդիմել դատարան իրենց իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության համար, այսինքն՝ իրականացնել, թե չիրականացնել իրենց դատական պաշտպանության հիմնական իրավունքը: Անձինք իրենց դատական պաշտպանության հիմնական իրավունքն իրացնելիս, ինչպես նաև դատարաններն արդարադատություն իրականացնելիս պետք է առաջնորդվեն վերը նշված սկզբունքով:

Դատական պաշտպանության իրավունքի իրացումը տնօրինչականության (դիսպոզիտիվության) սկզբունքի հիման վրա անձի համար երաշխավորում է նաև հայցի առարկան և հիմքն ինքնուրույն որոշելու իրավական հնարավորություն:

Միաժամանակ, անհրաժեշտ է փաստել, որ տնօրինչականության սկզբունքը վարչական դատավարության առանձին փուլերում ունի որոշակի առանձնահատուկ դրսևորումներ: Նշվածը պայմանավորված է վարչական դատավարությունում դատարանի դերով, որը գործը քննում է ի պաշտոնե: Այսպես, վարչական դատարանի կողմից գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե ("ex officio") պարզելու գործառույթը ենթադրում է, մասնավորապես, հետևյալը.

1) Վարչական դատարանը կաշկանդված չէ վարչական դատավարության մասնակիցների ներկայացրած ապացույցներով, միջնորդություններով, առաջարկություններով, բացատրություններով և առարկություններով: Նշվածից հետևում է, որ թեև դատարանը պարտականություն է կրում անդրադառնալ դատավարության մասնակիցների ներկայացրած բոլոր ապացույցներին, միջնորդություններին, առաջարկություններին, բացատրություններին և առարկություններին, սակայն սահմանափակված չէ դրանցով:

2) Վարչական դատարանն իր նախաձեռնությամբ ձեռնարկում է համարժեք միջոցներ՝ կոնկրետ գործի լուծման համար անհրաժեշտ իրական փաստերի վերաբերյալ հնարավոր և հասանելի տեղեկություններ ձեռք բերելու համար: Այսինքն՝ դատարանը, կաշկանդված չլինելով վարչական դատավարության մասնակիցների ներկայացրած ապացույցներով, միջնորդություններով, առաջարկություններով, բացատրություններով և առարկություններով, ձեռնարկում է համարժեք միջոցներ՝ գործի քննության և լուծման համար նշանակություն ունեցող փաստերի վերաբերյալ տեղեկություններ ձեռք բերելու համար: Ընդ որում, անհրաժեշտ է փաստել, որ վարչական դատավարությունը պետք է ընթանա այնպես, որ բացահայտվեն գործի իրական փաստերը: Նշված առաքելությունն իրականացնելու համար դատարանն օժտված է համապատասխան լիազորություններով, որոնք պետք է համարժեք օգտագործվեն քննարկվող գործառույթն իրականացնելու համար: Ըստ այդմ, գործի իրական փաստերը բացահայտելը վարչական դատարանի ոչ թե հայեցողական լիազորությունն է, այլ պարտականությունը:

3) Վարչական դատարանը մատնանշում է հայցադիմումներում առկա ձևական սխալները, առաջարկում է ճշտել ոչ հստակ հայցային պահանջները, ոչ ճիշտ հայցատեսակները փոխարինել պատշաճ հայցատեսակներով, տարբերակել հիմնական և ածանցյալ պահանջները, համալրել ոչ բավարար փաստական տվյալները:

4) Վարչական դատարանը պահանջում է, որ ներկայացվեն գործի փաստական հանգամանքները պարզելու և գնահատելու համար անհրաժեշտ բոլոր ապացույցները: Նշված լիազորությունը նույնպես բխում է այն հանգամանքից, որ դատարանը կրում է գործի իրական փաստերն ամբողջությամբ բացահայտելու պարտականություն (*տես, Ա/Ձ Գևորգ Դավթյանն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Մաշտոցի հարկային տեսչության ՀՀ վճարելի դատարանի 30.11.2018 թվականի թիվ ՎԴ/2976/05/15 վարչական գործով որոշումը*):

Ամփոփելով վերոգրյալը՝ հարկ եմ համարում արձանագրել, որ դատարանն ներկայացված հայցադիմումում հայցի առարկան և հիմքը պետք է ձևակերպված լինեն հստակ և որոշակի, որպեսզի դատարանի համար առնվազն պարզ լինի, թե ինչ է ակնկալում հայցվորը և հնարավորություն ունենա ներկայացված նյութաիրավական պահանջի կապակցությամբ իրավական որոշակիության սկզբունքի պահանջներին բավարարող դատական ակտ կայացնել, իսկ այն դեպքում երբ հայցի առարկան և հիմքը ձևակերպված են ոչ հստակ կամ վերացական, ապա դատարանը պարտավոր է իրականացնել մատնանշման իր պարտականությունը՝ չխախտելով տնօրինչականության (դիսպոզիտիվության) սկզբունքը:

Տվյալ դեպքում Գրիգոր Սերոբյանի կողմից ներկայացվել է գործողության կատարման հայց, որով վերջինս պահանջել է պարտավորեցնել ՀՀ պաշտպանության նախարարությանը կատարել որոշակի գործողություններ, այն է՝ հաշվարկել և վճարել հետուսումնական ծառայության ողջ ժամանակահատվածի ընթացքում շաբաթ օրերին աշխատած, սակայն չվարձատրված գումարը: Հայցվորը հայցային պահանջի իրավական և փաստական

հիմքերում դրել է իր կողմից զինվորական ծառայության ողջ ժամանակահատվածում շաբաթ օրերին աշխատանքի ներկայանալու և այդ ժամանակի համար չվարձատրվելու փաստը:

Այսինքն, հայցվորը, ներկայացնելով ծառայության ողջ ժամանակահատվածի ընթացքում շաբաթ օրերին աշխատած, սակայն չվարձատրված գումարը հաշվարկելու և վճարելուն ուղղված որոշակի գործողություններ կատարելուն պարտավորեցնելու մասին պահանջ, ըստ էության, պահանջել է հանգստյան օրերին կատարված աշխատանքի դիմաց վարձատրություն տրամադրելուն ուղղված գործողություններ կատարել:

Վճռաբեկ դատարանը արձանագրել է, որ Գրիգոր Սերոբյանի շաբաթական ծառայության ժամանակի սահմանված տևողությունից դուրս ծառայողական պարտականությունների կատարմանը ներգրավված լինելու ժամանակը անհրաժեշտ է դիտարկել որպես չօգտագործված արձակուրդ, որը ենթակա էր վճարման վերջնահաշվարկի շրջանակներում՝ զինվորական ծառայությունից ազատելիս:

Սույն որոշմամբ Վճռաբեկ դատարանը դիրքորոշում է հայտնել այն մասին, որ շաբաթական ծառայության ժամանակի սահմանված տևողությունից դուրս ծառայողական պարտականությունների կատարմանը ներգրավված լինելու դեպքում անձն ունի այդ ժամանակի դիմաց փոխհատուցում ստանալու «օրինական սպասելիք», որը կարող է իրացվել չօգտագործված արձակուրդի օրերի դիմաց փոխհատուցման ձևով, որպիսի դիրքորոշման պայմաններում գտնում են, որ սույն գործով առկա է գործի նոր քննության անհրաժեշտություն՝ նկատի ունենալով, որ Գրիգոր Սերոբյանի կողմից ներկայացված հայցի հիմքը և առարկան ձևակերպված է վերացական և անորոշ, նշված պահանջից հնարավոր չի որոշել, թե վերջինս օրենքով սահմանված որ եղանակով և ձևով է պահանջում վարչական մարմնից հաշվարկել և վճարել իր ծառայության ողջ ժամանակահատվածի ընթացքում շաբաթ օրերին աշխատած, սակայն չվարձատրված գումարը, ուստի վերջինս գործի նոր քննության փուլում պետք է օգտվի տնօրինչականության (դիսպոզիտիվության) սկզբունքով իրեն վերապահված իրավունքից և դատարանի կողմից կատարված մատնանշումից հետո ինքնուրույն պետք է որոշի, թե օրենքով սահմանված որ եղանակով և ձևով է ուզում ստանալ շաբաթական ծառայության ժամանակի սահմանած տևողությունից դուրս ծառայողական պարտականությունների կատարմանը ներգրավված լինելու ժամանակի համար փոխհատուցում:

Միաժամանակ հարկ են համարում նշել, որ Վճռաբեկ դատարանը, բավարարելով հայցվորի պահանջը, որոշել է Գրիգոր Սերոբյանի շաբաթական ծառայության ժամանակի սահմանած տևողությունից դուրս ծառայողական պարտականությունների կատարմանը ներգրավված լինելու ժամանակը դիտարկել որպես չօգտագործված արձակուրդ՝ նշելով, որ այն ենթակա էր վճարման վերջնահաշվարկի շրջանակներում՝ զինվորական ծառայությունից ազատելիս, հաշվի չառնելով, որ հայցվորի կողմից նման պահանջ ներկայացված չի եղել, ինչպես նաև նման փաստարկներ վկայակոչված չեն եղել հայցի հիմքում, ուստի Վճռաբեկ դատարանը չի կարող սեփական նախաձեռնությամբ լրացնել հայցի հիմքը և առարկան՝ ինքնուրույն որոշելով ոչ աշխատանքային շաբաթ օրերին ծառայության ներգրավելու համար հայցվորի հատուցումը հաշվարկելու և վճարելու ձևն ու եղանակը:

Ամբողջ վերոգրյալի հիման վրա գտնում են, որ սույն գործն անհրաժեշտ է ուղարկել նոր քննության, քանի որ ՀՀ վարչական դատարանի կողմից ոչ հստակ հայցային պահանջը ճշտելու և հայցի հիմքը լրացնելու առաջարկ անելու պարտականության պատշաճ կատարման պայմաններում միայն սույն գործով կարող է ապահովվել արդյունավետ դատաքննությունը և անձի խախտված իրավունքների արդյունավետ դատական պաշտպանությունը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ հայտնում եմ իմ անհամաձայնությունը Վճռաբեկ դատարանի կողմից կայացված որոշման եզրափակիչ մասի վերաբերյալ:

ԴԱՏԱՎՈՐ՝

Հ. ԲԵԴԵՎՅԱՆ